Սեպտեմբերի 16, 2008 թ.

Պարոն Դոմինիկ Ստրոսս-Կանին
Ղեկավար տնօրեն
Արժույթի միջազգային հիմնադրամ
Վաշինգտոն, Կ.Շ. 20431

Հարգելի պրն. Ստրոսս-Կան,

Ի աջակցություն տնտեսական բարեփոխումների իր ծրագրին, Հայաստանի Հանրապետության կառավարությունը դիմում է Աղքատության կրճատման և տնտեսական աճի ծրագրի ներքո եռամյա վարկ ստանալու համար՝ 9.2 միլիոն ՍԴՌ-ի (մասնաբաժնի 10 տոկոսի) համարժեք գումարով: Մասնաբաժնի ներքո այս վարկի փոքր ծավալը ազդարարում է Հայաստանի կարգավիճակը որպես հասուն կայունացած:

2008 թ. մայիսի 4-ին ավարտված ԱԿՏԱ ծրագրի ներքո մենք կարևոր արդյունքների ենք հասել: Շրջահայաց դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները և հեռանկարային կառուցվածքային բարեփոխումները նպաստել են բարձր տնտեսական աճին, ցածր սղաճին, իրական եկամուտների ավելացմանը և աղքատության կրճատմանը: Մեր ներկա մարտահրավերը կայանում է այդ նվաճումների արմատավորման մեջ: Մինչդեռ կայունությունը անհրաժեշտ է աճի համար, միայն տնտեսության արտադրական ներուժի զարգացմամբ մենք կարող ենք ապահովել աճի հարատևումը: Նոր ծրագիրը միտված է անավարտ կառուցվածքային բարեփոխումների իրականացմանը, որպեսզի ամբողջությամբ համալրվեն քաղաքականության շրջանակները և ինստիտուցիոնալ կառույցները՝ Հայաստանի տնտեսության առջև ծառացած հետագա մարտահրավերների հաղթահարման համար:

Կից ներկայացվող Տնտեսական և ֆինանսական քաղաքականությունների հուշագիրը ներկայացնում է 2008-11 թվականների ընդհանուր մակրոտնտեսական նպատակները և սահմանում կոնկրետ միջոցառումներ 2008-09 թթ. համար: Կառավարությունն իր ուշադրությունը բևեռելու է հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ամրապնդմանը, արտադրությանը խթանող կառուցվածքային բարեփոխումների խորացմանը, մրցակցությանը խաթարող խոչընդոտների կրճատմանը և կառավարման բարելավմանը: Հարկաբյուջետային

բարեփոխումները միտված են հարկային և մաքսային վարչարարության ամրապնդմանը և առանցքային են այդ բարեփոխումների հաջողության համար:

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը համոզված է, որ ՏՖՔՀ-ում ամրագրված քաղաքականությունները և միջոցառումները համահունչ են ծրագրի նպատակներին, սակայն անհրաժեշտության դեպքում պատրաստ է նաև լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել այդ ուղղությամբ: Կառավարությունը կխորհրդակցի ԱՄՀ-ի հետ այդ միջոցառումների կիրառման վերաբերյալ, ինչպես նաև նախապես կխորհրդակցի ՏՖՔՀ-ում ամրագրված քաղաքականությունները վերանայելու դեպքում՝ համաձայն ԱՄՀ-ի խորհրդակցական քաղաքականություններին: Միևնույն ժամանակ, ԱԿՏԱ վարկային ծրագրի ժամկետն ավարտվելուց հետո և մինչդեռ Հայաստանը ԱՄՀ-ի առջև նախկին վարկային պայմանավորվածությունների գծով անավարտ ֆինանսական պարտավորություններ պահպանի, կառավարությունը ժամանակ առ ժամանակ կխորհրդակցի ԱՄՀ-ի հետ Հայաստանի տնտեսական և ֆինանսական քաղաքականությունների վերաբերյալ՝ կառավարության նախաձեռնությամբ կամ ԱՄՀ-ի ղեկավար տնօրենի խնդրանքով: Ակնկալում ենք առաջարկվող վարկային ծրագրի առաջին կիսամյակային դիտարկումն ավարտել 2009 թ. հունիսին:

Հարգանքով,

/u/
Տիգրան Սարգսյան
Վարչապետ
Հայաստանի Հանրապետություն

/s/
Տիգրան Դավթյան
Ֆինանսների նախարար
Հայաստանի Հանրապետություն

/s/
Արթուր Ջավադյան
Կենտրոնական բանկի նախագահ
Հայաստանի Հանրապետություն

Հայաստանի Հանրապետություն
Տնտեսական և ֆինանսական քաղաքականությունների հուշագիր
16 սեպտեմբեր, 2008 թ.

1. Սույն Հուշագրում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական և ֆինանսական քաղաքականությունները 2009-11 թթ. համար, որոնց նպատակն է պահպանել տնտեսական աճի բարձր տեմպը և կրճատել աղքատությունը: Այս քաղաքականությունները հիմք են ծառայում Հիմնադրամի օժանդակությամբ իրականացվելիք նոր եռամյա ծրագրի՝ Աղքատության կրճատման և տնտեսական աճի (ԱԿՏԱ) ցածր հասանելիության (“low-access”) ծրագրի համար, որը վկայում է Հայաստանի՝ որպես հասուն և կայունացող տնտեսության կարգավիճակի մասին:

2. Նոր ծրագիրը հիմնվելու է 2008 թ. մայիսի 24-ին ավարտված Աղքատության կրճատման և տնտեսական աճի (ԱԿՏԱ) ծրագրի օժանդակությամբ իրականացված ծրագրի շրջանակներում արդեն իսկ արձանագրված զգալի առաջընթացի վրա: Ուշադրություն է դարձվելու հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության շրջանակների բարելավմանը, արտադրողականության բարձրացում ապահովող կառուցվածքային բարեփոխումների իրականացմանը, մրցակցության խոչընդոտների նվազեցմանը և կառավարման բարելավմանը: Նշված ոլորտներում հաջողության հասնելու համար առանցքային նշանակություն ունեն հարկային և մաքսային վարչարարության կատարելագործմանն ուղղված հարկաբյուջետային բարեփոխումները:

3. Սույն Հուշագրում ամփոփ ներկայացված է կառավարության 2005-08 թթ. ծրագրի կատարողականը, 2009-11 թթ. միջնաժամկետ ծրագրերը և քաղաքականության սկզբունքները, ինչպես նաև՝ տնտեսական և ֆինանսական որոշակի քաղաքականություններ 2008-09 թթ. համար: Հիմնադրամի աշխատակիցների հետ պայմանավորվածություններ ենք ձեռք բերել 2008-09 թթ. մակրոտնտեսական թիրախների և կառուցվածքային հենանիշերի շուրջ, որոնք ներկայացված են 1-ին և 2-րդ աղյուսակներում: Սույն Հուշագրում ներկայացված քաղաքականություններն համահունչ են մեր Աղքատության հաղթահարման վերանայված ռազմավարական ծրագրին (ԱՀՌԾ), որը վերանվանվել է “Կայուն զարգացման ծրագիր” (ԿԶԾ), ինչպես նաև կառավարության 2009-11 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրին: Ակնկալում ենք առաջարկվող վարկային ծրագրի առաջին կիսամյակային

դիտարկումն ավարտել 2009 թ, հունիսի վերջին, երկրորդ դիտարկումը 2009 թ. նոյեմբերի վերջին, իսկ երրորդ դիտարկումը 2010 թ. հունիսի վերջին:

I. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ 2005-08 ԹԹ. ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

4. 2005-08 թթ. ծրագիրն ունեցել է երեք հիմնական նպատակ. ա) դրամավարկային և հարկաբյուջետային շրջահայաց քաղաքականությունների միջոցով մակրոտնտեսական կայունության պահպանում, բ) լրացուցիչ ներքին եկամուտների հավաքագրում՝ աղքատության կրճատումը և տնտեսական աճի խթանումը ֆինանսավորելու նպատակով, և գ) մասնավոր հատվածի գործունեության կատարելագործում՝ աջակցելով ֆինանսական հատվածի զարգացմանը և բարելավելով հանրային և կորպորատիվ կառավարումը: Թվարկված նպատակները մեծ մասամբ իրագործվել են:

5. Դրամավարկային և հարկաբյուջետային շրջահայաց քաղաքականությունների, ինչպես նաև հեռահար կառուցվածքային բարեփոխումների օժանդակությամբ ապահովվել են տնտեսական աճի բարձր տեմպեր, ցածր գնաճ, իրական եկամուտների աճ և աղքատության մակարդակի նվազում: 2005-07 թթ. ժամանակահատվածում ՀՆԱ-ի աճը տարեկան կազմել է միջինը 13.7 տոկոս, իսկ գնաճը միջին հաշվով մնացել է 3 տոկոսից ցածր: Միաժամանակ, ընդհանուր աղքատության մակարդակը 2004 թ. 34.6 տոկոսից նվազել է՝ 2006 թ. հասնելով 26.5 տոկոսի: Չնայած արտաքին ընթացիկ հաշվի պակասուրդի մեծացմանը, որը պայմանավորված էր երկնիշ տնտեսական աճով և ներդրումների բարձր ակտիվությամբ, համախառն միջազգային պահուստները 2004-2007 թվականներին աճել են՝ ներմուծման ծածկույթի 3.1 ամսից հասնելով 4.3 ամսի: Անհրաժեշտ ֆինանսավորումն ապահովվել է կապիտալի մեծածավալ ներհոսքի շնորհիվ (վերջինս հիմնականում ստացվել է ՕՈՒՆ տեսքով)՝ ի վկայություն Հայաստանի տնտեսության մեջ ներդրումներ կատարելու հնարավորությունների բարելավման: Արտաքին փոխառությունների ավելացման արդյունքում մի փոքր վատթարացել են արտաքին պարտքի ցուցանիշները, որոնք, սակայն, շարունակում են բավական ցածր մնալ և մտահոգության տեղիք չեն տալիս:

6. Մեր ծրագրի հաջողության համար խիստ կարևոր է եղել շրջահայաց հարկաբյուջետային քաղաքականության իրագործումը: Բյուջեի ընդհանուր պակասուրդը պահպանվել է ՀՆԱ-ի մոտ 2 տոկոսի սահմաններում: Եկամուտների հավաքագրման առումով արձանագրված առաջընթացի հաշվին ֆինանսավորվել են աղքատության կրճատմանը և տնտեսական աճի

խթանմանը նպաստող ծախսեր: Հարկային եկամուտների մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ 2004 թ. 14 տոկոսից 2007 թ. հասել է 16 տոկոսի, ընդ որում՝ աճել են նաև դրամաշնորհները և ոչ հարկային եկամուտները: Դրա շնորհիվ կարողացել ենք ծախսերն ավելացնել՝ նույն ժամանակահատվածում ՀՆԱ-ի 17.1 տոկոսից հասցնելով 22.4 տոկոսի (ներառյալ գազի սուբսիդիան)[1], մինչդեռ կառավարության պարտքը կրճատվել է՝ ՀՆԱ-ի 32.4 տոկոսից մինչը ՀՆԱ-ի 17.4 տոկոս:

7. Դրամավարկային քաղաքականության շրջանակը կատարելագործվել է՝ 2006 թ. գնաճի նպատակադրման ոչ լիարժեք ռեժիմի ընդունման արդյունքում: Ավելին, 2008 թ. հանձնառելով նախապես հայտարարված եռամյա թիրախ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) կարևոր քայլ կատարեց գնաճի նպատակադրման լիարժեք ռեժիմի անցնելու ուղղությամբ: Ճկուն փոխարժեքի և վերոհիշյալ նոր մոտեցումների շնորհիվ հաջողության ենք հասել՝ ապահովելով չափավոր գնաճ և գնաճային սպասումների խարիսխ լուրջ արտաքին ցնցումների պարագայում: Դրամավարկային քաղաքականության իրագործումն էապես կատարելագործվել է՝ անուղղակի գործիքների, հատկապես բաց շուկայի գործառնությունների ավելի լայնատարած կիրառության շնորհիվ, որոնց օգնությամբ բարելավվել է իրացվելիության կառավարումը և խթանվել փողի շուկայի զարգացումը:

8. Ծրագրի ժամանակահատվածում մեր հարկային քաղաքականությունն ուղղված է եղել հարկային արտոնությունների շրջանակի կրճատմանը: Սահմանափակել ենք պարզեցված հարկի ռեժիմ մուտքի հնարավորությունը՝ վերջնանպատակ սահմանելով այդ հարկի իսպառ վերացումը, միաժամանակ կրճատելով նաև սահմանին ԱԱՀ-ի վճարումից ազատված ապրանքների թիվը: Հաստատագրված վճարները ինդեքսավորվել են ՍԳԻ-ի նկատմամբ: Բացի այդ, մշակել և խորհրդարան ենք ներկայացրել հարկային օրենսգրքի ընդհանուր մասը: Հարկային վարչարարության բարեփոխումները սևեռվել են տեղեկատվական տեխնոլոգիաների կարողությունների զարգացման, հաշվառման վճարները վերացնելու միջոցով հարկ վճարողների և հարկային պաշտոնյաների միջև շփումների սահմանափակման, ինչպես նաև ստուգումների համար հարկ վճարողների ընտրության՝ ռիսկայնության վրա

[1] Բյուջեի ցուցանիշները գազի սուբսիդիան չեն ներառում:

հիմնված համակարգերի ներդրման ուղղությամբ: Ավելին, վերջերս ընդունել ենք միջնաժամկետ հատվածում հարկային բարեփոխումների համապարփակ և հավակնոտ ծրագիր:

9. Կառուցվածքային բարեփոխումների շնորհիվ բարելավվել է ֆինանսական հատվածի ենթակառուցվածքը և կարգավորման ու վերահսկողության դաշտը, խթանվել՝ մասնավոր հատվածի ակտիվությունը և ֆինանսական խորացման գործընթացը: Արդյունքում, ֆինանսական միջնորդության ցուցանիշի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2006 թ. տարեվերջից սկսած գրեթե կրկնապատկվել է:

- Բանկերի կորպորատիվ կառավարման հիմնական թերությունները լուծվել են ծրագրի վաղ շրջանում՝ բարձրացնելով բանկային համակարգի հաշվետվողականությունը և համակարգի նկատմամբ վստահությունը: Շուկայի թափանցիկությունը, պարտատերերի իրավունքները և սպառողների պաշտպանությունը բարելավվել են՝ նոր օրենսդրության ընդունմամբ և ՀՀ ԿԲ-ում վարկային ռեգիստրի, ինչպես նաև մասնավոր վարկային բյուրոյի ստեղծմամբ: Ֆինանսական կառույցները հզորացվել են նվազագույն կապիտալի պահանջները խստացնելու, Բազել II համաձայնագրի դրույթների առաջին մակարդակի ներդրման, բանկերում ռիսկերի կառավարման կարողությունների զծով ներդրումների և միջազգային հեղինակավոր առևտրային բանկերի՝ հայաստանյան շուկա մուտքի շնորհիվ: Վերջերս օրենսդրություն ենք ընդունել ակտիվների արժեթղթավորման և հիփոթեքով ապահովված արժեթղթերի մասին՝ նպատակ ունենալով խթանել հիփոթեքային շուկայի զարգացումը: Ընդունվել են նաև օրենքներ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, սպառողական վարկերի և բանկային ավանդների ֆինանսական պայմանների հրապարակման, ինչպես նաև ֆինանսական օմբուդսմանի ծառայությունների ներդրման մասին:

- Ֆինանսական հատվածի կարգավորումը և վերահսկողությունն էապես կատարելագործվել է՝ ամբողջացնելով և ներդնելով ռիսկերի վրա հիմնված վերահսկողություն, ինչպես նաև՝ վերջին շրջանում անցում կատարելով գործառույթների կամ գործընթացների վրա հիմնված կառուցվածքի, որի շրջանակներում առանձնացվում են հետևյալ

հիմնական գործառույթները. (i) նորմատիվային պահանջներ, (ii) շուկայական վարքագիծ, և (iii) սպառողների պաշտպանություն:

- Նպատակ ունենալով սահմանափակել ոչ ֆորմալ տնտեսական ակտիվությունը և բարձրացնել դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը, ձեռնարկել ենք կանխիկով գործառնությունների և արտարժույթի օգտագործման սահմանափակման մի շարք միջոցառումներ, ներառյալ արտարժութային գրասենյակների կարգավորման և վերահսկողության բարելավումը, մանրածախ առևտրի խոշոր օբյեկտներում վաճառքի տերմինալների պարտադիր տեղադրումը, հարկերի հաստատման նպատակով կրեդիտ քարտերով գործառնությունների ստացականների ընդունելիությունը և կանխիկով գործառնությունների սահմանափակման և աշխատավարձերի էլեկտրոնային վճարման մասին օրենսդրության ընդունումը:

- Ապահովագրության ոլորտում ընդունել ենք օրենսդրություն, որը լիովին համահունչ է Ապահովագրության վերահսկողների միջազգային ընկերակցության ստանդարտներին: Ներդրել ենք նաև ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր, որոնց նպատակն է բարելավել հաշվապահական հաշվառումը, աուդիտը և ֆինանսական հաշվետվությունները, վճարունակությունը և պահուստները, վերապահովագրությունը, ապահովագրական ընկերությունների վերահսկողությունը և ապահովագրական ընկերությունների լուծարման ընթացակարգերը: ՀՀ ԿԲ-ում ստեղծվել և արդեն գործում է ապահովագրական ռեգիստր:

- Առաջընթաց է արձանագրվել փողի և կապիտալի շուկայի զարգացման ուղղությամբ. ընդունվել է արժեթղթերի շուկայի մասին նոր օրենք, որը համահունչ է Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության ստանդարտներին: Հայաստանի ֆոնդային բորսան (Արմէքս) ինքնակարգավորվող կազմակերպությունից վերածվել է բաժնետիրական ընկերության, ընդ որում՝ վերջինիս և կենտրոնական դեպոզիտարիայի սեփականությունը ստանձնել է “Nasdaq-OMX”-ը:

10. Հանրային հատվածի բարեփոխումների երկրորդ փուլն ավարտվել է 2007 թ. օգոստոսին: Հանրային հատվածի արդյունավետությունը բարելավելու և հաշվետու գործելակերպը երաշխավորելու նպատակով ներդրել ենք կառավարման նոր կառույցներ, քաղաքացիական ծառայության

բնագավառում՝ կատարելագործել ենք մարդկային ռեսուրսների կառավարման և կատարելագործման ընթացակարգերը, կարգավորել և ապակենտրոնացրել ծառայությունների մատուցումը, խրախուսել հանրության մասնակցությունը որոշումների կայացմանը, և բարելավել հաղորդակցությունը հանրության հետ: Ավելին, վերջնականացրել ենք բարեփոխումների երրորդ փուլի ռազմավարությունը, որը միտված կլինի քաղաքացիական ծառայության կատարելագործմանը: Առաջընթաց ենք արձանագրել հակակոռուպցիոն նոր ռազմավարության մշակման հարցում, որով սահմանվում են կոնկրետ նպատակներ և կատարողականի ցուցանիշներ, ինչպես նաև՝ գործողությունների ծրագիր, որը նախատեսվում է ավարտուն տեսքի բերել 2008 թ. նոյեմբերին:

11. 2000 թվականին նախաձեռնված բարեփոխումներից հետո շարունակել ենք ջանքեր գործադրել էներգետիկ ոլորտի վերակառուցման ուղղությամբ: Տնտեսումների ցուցանիշի բարելավման, բաշխման կորուստների կրճատման և հավաքագրումների բարելավման արդյունքում էլ ավելի են ամրապնդվել մասնավորեցված ընկերությունների ֆինանսական դիրքերը, որի շնորհիվ հնարավոր է եղել խուսափել սակագների ճշգրտումներից, և նվազել է կառավարության օժանդակության անհրաժեշտությունը: Միաժամանակ, բարելավվել է էլեկտրաէներգիայի, գազի, ջրի և ոռոգման հոսքերի հուսալիությունը: 2016 թվականին փակվելիք ատոմակայանի փոխարինման ծրագրերն ընթացքի մեջ են:

II. ԾՐԱԳՐԻ 2009-11 ԹԹ. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

12. Նոր ծրագիրը կառուցված է անցյալի մեր ձեռքբերումների և Կայուն զարգացման ծրագիրն ի կատար ածելու՝ մեր ռազմավարության վրա: Հայաստանը տպավորիչ արդյունքների է հասել տնտեսական աճի և աղքատության կրճատման առումներով՝ ավելի բաց դարձնելով իր տնտեսությունը, վերացնելով մրցակցության խոչընդոտները և իրագործելով մակրոտնտեսական հիմնավորված քաղաքականություններ: Մեր առջև ծառացած մարտահրավերը նշված ձեռքբերումներն ամբողջականացնելն է: Տնտեսական աճի համար անհրաժեշտ է կայունություն, սակայն աճը մնայուն դարձնելու համար անհրաժեշտ է բարձրացնել տնտեսության արտադրողականությունը: Նոր ծրագիրն անդրադառնում է չավարտված կառուցվածքային բարեփոխումների օրակարգին, որոնց շնորհիվ հնարավոր

կլինի քաղաքականության սկզբունքները և կառույցները լիովին պատրաստել Հայաստանի տնտեսությանը սպասող հետագա մարտահրավերներին:

13. Նախորդ ծրագրի շնորհիվ կարևոր արդյունքներ ենք արձանագրել բազմաթիվ ոլորտներում, սակայն գիտակցում ենք, որ մի շարք այլ ոլորտներում դեռ անհրաժեշտ է լրացուցիչ ջանքեր գործադրել: Պատրաստվելով անցում կատարել գնաճի նպատակադրման լիարժեք ռեժիմի, ընդունում ենք այն հանգամանքը, որ հարկաբյուջետային ծրագրերը պետք է հղկել և ավելի մեծ չափով ներդաշնակեցնել կայունացման քաղաքականության կարիքներին՝ նպաստելով հարկաբյուջետային կարևորագույն ռիսկերի նկատմամբ քաղաքականության պատշաճ արձագանքների ձևակերպմանը: Արտադրողականության բարձրացմանը և գործարարության միջավայրի բարելավմանն ուղղված բարեփոխումներ են անհրաժեշտ հայաստանյան ընկերություններն ավելի մրցունակ դարձնելու և ստվերային տնտեսական ակտիվությունն օրինական դաշտ բերելու համար: Այս համատեքստում առանձնակի կարևորություն են ստանում հարկային քաղաքականության և վարչարարության բարեփոխումները: Չնայած նախկինում մեր գործադրած ջանքերին, Հայաստանում հարկային եկամուտներ/ՀՆԱ գործակիցը դեռ մնում է ցածր, որի պատճառով սահմանափակվում է արտադրողականության բարձրացմանը և աղքատության կրճատմանը նպաստող ծախսերին միջոցներ ուղղելու հնարավորությունը: Շարունակելու ենք ջանքեր գործադրել ֆինանսական միջնորդության բարձրացման ուղղությամբ, որը միջազգային ստանդարտներով դեռ ցածր է:

14. Մակրոտնտեսական հիմնավոր քաղաքականությունների շարունակման և կառուցվածքային բարեփոխումների արդյունավետ իրագործման շնորհիվ հնարավոր կլինի հաջորդ երեք տարիների ընթացքում ապահովել տարեկան միջինն առնվազն 8 տոկոսի իրական տնտեսական աճ: 2010-11 թթ. համար կանխատեսվում է, որ 2009 թվականի սկզբնական բարելավումից հետո բյուջեի հիմնական հաշվեկշիռը, որով ավելի լավ է չափվում բյուջեի ազդեցությունը ներքին պահանջարկի վրա, հաշվեկշռի մեջ չներառելով դրամաշնորհները և արտաքին տոկոսային վճարումները, չի գերազանցի ՀՆԱ-ի 2 տոկոսը: Այսպիսով, հարկաբյուջետային քաղաքականությունը կնպաստի կայուն աճի ապահովմանը՝ միաժամանակ պահպանելով մակրոտնտեսական կայունությունը: Հարկահավաքման բարելավումը հիմնված կլինի հարկային բարեփոխումների վրա՝ հնարավորություն ընձեռելով լրացուցիչ ծախսեր կատարել

ենթակառուցվածքի, կենսաթոշակային բարեփոխումների և աղքատության կրճատման ուղղություններով: Ակնկալվում է, որ վերոհիշյալ քաղաքականությունների արդյունքում էլ ավելի կկրճատվի աղքատության մակարդակը, որը ԿԶԾ-ի հիմնական նպատակներից է: Արտաքին ընթացիկ հաշվի պակասուրդը կնվազի, սակայն՝ աստիճանաբար, 2011 թ. հասնելով ՀՆԱ-ի մոտ 8 տոկոսի, որը պայմանավորված կլինի տնտեսական աճի տեմպը պահպանելու նպատակով ներմուծվող կապիտալ ապրանքների և միջանկյալ սպառման ապրանքների նկատմամբ բարձր պահանջարկով: Կանխատեսվում է, որ արտաքին պարտքի գործակիցները կնվազեն՝ հասնելով ՀՆԱ-ի մոտ 9 տոկոսի:

15. Մակրոտնտեսական կայունությունը կշարունակի մնալ հարկաբյուջետային քաղաքականության հիմնական նպատակը, քանի որ հենց մակրոտնտեսական կայունության միջոցով է հնարավոր պահպանել և ընդլայնել տնտեսական աճը, ինչպես նաև՝ էլ ավելի կրճատել աղքատությունը: Գնաճի բարձրացման պայմաններում պահանջարկի ճնշումները մեղմելու նպատակով կորդեգրվի հարկաբյուջետային ավելի զսպողական դիրք: Ավելին, ֆինանսների նախարարությունը կկատարելագործի հարկաբյուջետային ծրագրավորումը՝ հարկաբյուջետային ռիսկերը և քաղաքականության համապատասխան միջոցառումները վերլուծելու և բացահայտելու միջոցով բարձրացնելով հարկաբյուջետային քաղաքականության վստահելիությունը, ինչպես նաև՝ բարելավելով տնտեսագիտական մոդելավորման և կանխատեսման կարողությունները: Մենք կկատարելագործենք նաև ներդրումային ծրագրեր գնահատելու և իրականացնելու մեր կարողությունները. դա մեզ հնարավորություն կտա իրականացնել բարձր եկամտաբերությամբ ծրագրեր՝ մասամբ ոչ արտոնյալ ֆինանսավորմամբ:

16. Դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակը մնալու է գների կայունությունը: Ծրագրի ժամանակահատվածի ընթացքում ՀՀ ԿԲ-ն կավարտի անցումը գնաճի նպատակադրման լիարժեք ռազմավարության՝ ճկուն փոխարժեքի ռեժիմի համատեքստում բարելավելով քաղաքականության փոխանցման մեխանիզմի աշխատանքը: Դրամավարկային քաղաքականության իրագործմանը կնպաստի բաց շուկայի գործառնությունների ընդլայնումը՝ սերտացնելով պարտքի և իրացվելիության կառավարման միջոցառումների համակարգումը ֆինանսների նախարարության հետ: Միջբանկային և արտարժույթի շուկաների

զարգացմանն ուղղված կառուցվածքային միջոցառումները կօգնեն բարելավել դրամավարկային քաղաքականության գործիքների արդյունավետությունը:

17. Հաջորդ երեք տարիների առաջնահերթ խնդիր է հարկային քաղաքականության և վարչարարության կատարելագործումը: Այս ոլորտում մնացող թերությունների հաղթահարումը խիստ կարևոր է գործարարության միջավայրը բարելավելու և մրցունակությունը բարձրացնելու համար: Հարկային քաղաքականության դաշտը կպարզեցվի և կկատարելագործվի՝ հեշտացնելու համար դրա պահանջների կատարումը և վարչարարությունը: ԱԱՀ-ի նվազագույն շեմի սահմանումը և շեմից ցածր շրջանառությամբ փոքր տնտեսվարող սուբյեկտների համար պարզեցված ռեժիմի ներդրումը քայլեր են ճիշտ ուղղությամբ: Հարկային վարչարարության բարեփոխումների նպատակն է բարձրացնել կամավոր կարգապահության մակարդակը և ներդնել ինքնագնահատման համակարգ, որում հարկ վճարողների և հարկային պաշտոնյաների ուղղակի շփումները կվերացվեն՝ կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով: Նմանապես, մաքսային բարեփոխումների նպատակն է լինելու ռիսկայնության վրա հիմնված գործընթացների ներդրումը մաքսային պաշտոնյաների և ներմուծողների միջև շփումը նվազագույնի հասցնելու համար:

18. Ֆինանսական հատվածի բարեփոխումները մոտակա ժամանակահատվածում ուղղված կլինեն ֆինանսական միջնորդության աստիճանի հետագա բարձրացմանը և Հայաստանում առաջարկվող ֆինանսական ծառայությունների տեսականու ընդլայնմանը՝ միաժամանակ երաշխավորելով ֆինանսական հատվածի կայունությունը: Համագործակցելով “Nasdaq-OMX”-ի հետ՝ կիրականացնենք կապիտալի շուկայի զարգացման միջոցառումների ընդգրկուն փաթեթ:

III. 2008-09 ԹԹ. ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ

Ա. Հարկաբյուջետային քաղաքականություն

19. Ակնկալվում է, որ 2008 թ. բյուջեի պակասուրդը, “GFSM 2001”-ի սահմանմամբ, չի գերազանցի ՀՆԱ-ի 1.4 տոկոսը, որը զգալիորեն ավելի ցածր է, քան բյուջեով նախատեսված ՀՆԱ-ի 2.6 տոկոսը (ներառյալ գազի

սուբսիդիան)[2]. դա պայմանավորված կլինի հարկային եկամուտների գերակատարմամբ և ծախսերի դանդաղ կատարմամբ: Հարկային եկամուտների հավաքագրման մակարդակը բարձր է՝ ներմուծման արագ աճի, մաքսային համակարգում գանձումների բարելավման և ԱԱՀ-ի հավաքագրման բարձր ցուցանիշի շնորհիվ: Այնուհանդերձ, հավակնոտ թիրախների ապահովման փորձերի պատճառով զգալի չափով աճել են հարկային գերավճարները: Ակնկալվում է, որ ՀՆԱ-ի մեջ հարկային եկամուտները 2008 թվականին կհասնեն 603 միլիարդի: Դրամաշնորհներն իրենց հերթին ակնկալվածից ավելի ցածր էին՝ մասամբ պայմանավորված Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամից 50 միլիոն ԱՄՆ դոլարի ստացման ուշացումներով:

20. 2009 թվականի համար ՀՆԱ-ի 1 տոկոսի բյուջեի պակասուրդի դեպքում հնարավոր է պատշաճ հավասարակշռություն ապահովել մի կողմից՝ պահանջարկի ճնշումները զսպելու անհրաժեշտության, իսկ մյուս կողմից՝ աղքատության կրճատմանը նպաստող գերակա ծրագրերի համար միջոցներ ապահովելու անհրաժեշտության միջև: Հարկային եկամուտները կհասնեն 700 միլիարդ դրամի՝ արտացոլելով հարկային բարեփոխումների դրական ազդեցությունը, իսկ ՀՆԱ-ի մեջ հարկային եկամուտների մասնաբաժինը կաճի՝ 2008 թ. համար նախատեսվող 16.4 տոկոսից 2009 թ. հասնելով 16.8 տոկոսի: Կանխատեսվում է, որ դրամաշնորհները և ոչ հարկային եկամուտները կաճեն ՀՆԱ-ի 0.4 տոկոսի չափով: Ակնկալվում է, որ ծախսերը կհասնեն 919 միլիարդ դրամի (ՀՆԱ-ի 22.1 տոկոս), որն ավելի բարձր է, քան 2008 թվականի ՀՆԱ-ի մեջ 21.6 տոկոս ցուցանիշը, և պայմանավորված կլինի կենսաթոշակների և ենթակառուցվածքի գծով ծախսերի ավելացմամբ: Հիմնական հաշվեկշիռը կբարելավվի՝2008թ. ՀՆԱ –ի - 1.9 տոկոսի դիմաց 2009 թ. կազմելով ՀՆԱ -1.7 տոկոսը: Պակասուրդի թիրախի կատարմանը սպառնացող հավանական ռիսկ է առկա հարկային գերավճարների մեծ գումարը (2008թ. օգոստոսի 1-ի դրությամբ 121 միլիարդ դրամ): Մենք հանձն ենք առել վերլուծել և լուծել այս հարկային գերավճարների հիմքում ընկած համակարգային խնդիրները՝ ապահովելով, որ թիրախի կատարմանը սպառնացող ցանկացած ռիսկեր նվազեցվեն:

---

[2] Տե՛ս տողատակի ծանոթագրություն 1-ը:

Բ. Դրամավարկային քաղաքականություն և փոխարժեքի քաղաքականություն

21. Դրամավարկային պայմանները կշարունակենք դարձնել ավելի զսպողական՝ ՀՀ ԿԲ-ի գնաճի թիրախը ապահովելու համար: Ներքին բարձր պահանջարկի պայմաններում պարենային ապրանքների և էներգակիրների ներմուծման բարձր գների պատճառով ձևավորվող գնաճային ճնշումների հետևանքով գնաճը գերազանցել է 4 ± 1.5 նպատակային միջակայքը: Մենք հավատարիմ կմնանք ռեպո տոկոսադրույքն աստիճանաբար բարձրացնելու մեր ռազմավարությանը, ընդ որում՝ պատրաստ ենք անհրաժեշտության դեպքում այն բարձրացնել ավելի արագ տեմպով, եթե գնաճային ճնշումները պահպանվեն: Փողի առաջարկի աճը կզսպվի տարվա մնացած ամիսների ընթացքում, որին կնպաստի արտարժութային շուկայի միջամտությունների ծավալի նվազեցումը, նախատեսվածից ցածր բյուջեի պակասուրդը և գանձապետական պարտատոմսերի զուտ թողարկումների ավելացումը: Կառավարությունը մտադիր է ավելացնել գանձապետական պարտատոմսերի շրջանառության մեջ գտնվող ծավալը 25 միլիարդ դրամով՝ սերտորեն համակարգելով այդ աշխատանքը ՀՀ ԿԲ-ի հետ: Դրամավարկային ծրագրի նպատակն է սահմանափակել դրամական բազայի աճը մոտ 18.5 տոկոսով, ընդ որում՝ նախատեսվում է արտաքին պահուստների ընդհանուր առմամբ կայուն մակարդակ 2007 թվականի համեմատ: Եթե լրացուցիչ արտաքին ճնշումներ չլինեն, ապա վստահ ենք, որ նշված միջոցառումների շնորհիվ հնարավոր կլինի գնաճը 2009 թ. վերադարձնել նպատակային միջակայքի սահմաններ:

22. Անցումը գնաճի նպատակադրման լիարժեք ռեժիմին կավարտվի ծրագրի ժամանակահատվածի ընթացքում: Ինստիտուցիոնալ նախադրյալները հիմնականում առկա են: Մեր ռազմավարության և կազմակերպական դաշտի ուսումնասիրությունը, որը 2007 թվականին անցկացվեց ԱՄՀ-ի տեխնիկական աջակցության առաքելության օժանդակությամբ, հանգեց այն եզրակացության, որ գնաճի նպատակադրման ռեժիմի հաջողության կարևորագույն բաղադրիչների մեծ մասը Հայաստանում առկա է, այդ թվում՝ ՀՀ ԿԲ-ի անկախությունը, ՀՀ ԿԲ-ի պատշաճ ներքին կառուցվածքը և բավարար կարողությունները, գնաճի եռամսյակային կանխատեսումների մոդելի առկայությունը և կիրառումը դրամավարկային քաղաքականության որոշումների կայացման գործընթացում, ինչպես նաև հասարակայնության հետ հաղորդակցության պատշաճ ռազմավարությունը: 2006 թվականից ի վեր ՀՀ ԿԲ-ն հրապարակում է գնաճի եռամսյակային հաշվետվություններ, ինչպես նաև՝ դրամավարկային քաղաքականության

վերաբերյալ ԿԲ-ի խորհրդի ամենամսյա նիստերի արձանագրությունները: Բացի այդ, գնաճի տարեվերջի թիրախից անցում ենք կատարել գնաճի շարունակական թիրախի:

23. Հավատարիմ ենք ճկուն փոխարժեքի ռեժիմի պահպանման քաղաքականությանը: Չնայած որ կապիտալի մեծածավալ և տատանողական ներհոսքի, ինչպես նաև՝ անորոշության խստացման պայմաններում 2008 թվականին անհրաժեշտ էր մեծացնել միջամտությունների ծավալը, արտարժութային միջամտություններն օգտագործվել են միայն որպես փոխարժեքի տատանողականությունը հարթեցնելու գործիք՝ հետամուտ չլինելով փոխարժեքի որոշակի թիրախային մակարդակի:

24. ՀՀ ԿԲ-ն փոխըմբռնման հուշագիր կկնքի ֆինանսների նախարարության հետ՝ կարգավորելով պետական արժեթղթերի թողարկումը (կատարողական չափորոշիչ): Համաձայնության ձեռքբերումից անմիջապես հետո ԿԲ-ն կդադարեցնի սեփական արժեթղթերի թողարկումը՝ փոխարենը ավելի մեծ ուշադրություն դարձնելով ռեպո գործառնությունների իրականացմանը: Գանձապետարանը կվերսկսի կարճաժամկետ գանձապետական պարտատոմսերի թողարկումը: Պարտքի թողարկումը սերտորեն կհամակարգվի ֆինանսների նախարարության և ԿԲ-ի միջև՝ հաշվի առնելու միաժամանակ և բյուջեի ֆինանսավորման, և իրացվելիության կառավարման կարիքները, ընդ որում՝ ֆինանսների նախարարությունը կհանձնառի խուսափել իր աճուրդների ընթացքում եկամտաբերության հատման միջոցառումների իրականացումից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարվի հայտերի բնականոն սպեկտրից դուրս գտնվող՝ ակնհայտորեն սպեկուլյատիվ հայտերը մերժելու նպատակով: ՀՀ ԿԲ-ն մտադիր է միջնաժամկետ հատվածում ավելացնել գանձապետական արժեթղթերի իր պորտֆելը՝ հակադարձ ռեպո գործառնություններ իրականացնելու իր կարողությունները մեծացնելու նպատակով:

25. Միաժամանակ, գիտակցում ենք, որ դրամավարկային փոխանցման մեխանիզմը դեռ թույլ է: Ուստի, կշարունակենք մոտակա շրջանում հետևել գնաճի նպակատադրման «թեթև» ռեժիմի՝ միաժամանակ մեծ ուշադրություն դարձնելով դրամավարկային ցուցանիշների վրա: Նպատակ ունենք ուժեղացնել դրամավարկային փոխանցման մեխանիզմը՝ էլ ավելի կատարելագործելով մեր գործառնական դաշտը և խթանելով ֆինանսական խորացումը և փողի միջբանկային շուկայի զարգացումը: Միջբանկային

շուկայի գործունեությունը բարելավելու նպատակով ՀՀ ԿԲ-ն դիտարկում է էլեկտրոնային առևտրի հարթակի ներդրումը: Բանկերի իրացվելիության կառավարումը բարելավելու նպատակով դիտարկում ենք նաև մեկօրյա վարկի ներդրումը և պահուստավորման պահանջի հաշվարկի ժամկետի երկարաձգումը՝ երկուսից հասցնելով չորս շաբաթվա, հաշվի առնելով տարբեր ամիսների ընթացքում կառավարության ծախսումների մեծ տատանողականությունը:

Գ. Կառուցվածքային բարեփոխումներ

Հարկաբյուջետային բարեփոխումներ

26. Բարելավում ենք մեր հարկային դաշտը: Ընդունվել է “Պետական պարտքի կառավարման մասին” օրենքը, որով ներդրվել է ընդհանուր պարտքի գումարի առավելագույն սահմանաչափ (ՀՆԱ-ի 60 տոկոսին համարժեք), ինչպես նաև՝ պակասուրդի մեծության սահմանափակում այն դեպքերի համար, երբ պարտքը գերազանցում է ՀՆԱ-ի 50 տոկոսը: 2009 թվականից սկսած մտադիր ենք բարելավել Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ դրանում ներառելով պարտքի կառավարմանը նվիրված առանձին բաժին, որը կօգնի քաղաքականության միջնաժամկետ (հետագա երեք տարիների) որոշումների մեջ հաշվի առնել նաև դրանց երկարաժամկետ հարկաբյուջետային ազդեցությունը: Մտադիր ենք մինչև 2009 թ. հունիս ավարտել հարկային օրենսգրքի հատուկ մասի մշակումը:

27. Մտադիր ենք կատարել հարկային քաղաքականության մի շարք փոփոխություններ: ԱԱՀ-ի դաշտում 2009 թ. հունվարից կսկսի գործել նոր հեշտացված համակարգ փոքր վաճառականների համար և 58.35 միլիոն դրամի հաշվառման նվազագույն շեմ: Դիտարկում ենք նաև միկրոձեռնարկությունների համար բիզնեսի տարեկան լիցենզիայի ներդրման տարբերակը: Փոփոխություններ ենք կատարել ընդհանուր հաստատագրված վճարների ռեժիմի մեջ՝ տոնավաճառները տեղափոխելով ԱԱՀ-ի և եկամտահարկի ընդհանուր դաշտ: Մտադիր ենք վերացնել հաստատագրված վճարների բոլոր ռեժիմները և կանոնավոր հարկային դաշտ տեղափոխել ներկայումս հաստատագրված հարկով հարկվող բոլոր ոլորտները (ակցիզային հարկ, մաքսային տուրքեր, եկամտահարկ և ԱԱՀ) ծրագրի ժամանակահատվածի ընթացքում: Անհրաժեշտ փոփոխությունները նախապատրաստելու համար մենք կամրապնդենք վարչարարական հզորությունները, հատկապես աուդիտի, արհեստավարժների աշխատանքի

ընդունման և ուսուցման և ռիսկի վերլուծության ոլորտներում: Այդ փոփոխությունների իրականացման ժամանակացույցը կսահմանվի ծրագրի առաջին դիտարկման ժամանակ: Մտադիր ենք միջազգային լավագույն պրակտիկային համահունչ բարեփոխել ԱԱՀ-ի վերադարձի համակարգը: Մաքրելու ենք վերադարձի չլուծված հայտերի կուտակումները, ներդնելու ենք ռիսկայնության վրա հիմնված կառավարման սկզբունքներ և վերադարձերի կանխատեսման համակարգ, և փոփոխելու ենք օրենքը՝ կեղծ հայտերի համար սահմանված պատիժները խստացնելու և 2009 թ. դեկտեմբերի 31-ից հետո ներկայացված հայտերի կապակցությամբ վերադարձի ուշացումների դիմաց տոկոսներ վճարելու (կատարողական չափորոշիչ) նպատակով: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ ԱԱՀ-ի վերադարձի՝ 2008 թ. դեկտեմբերի 31-ից հետո ստացվող բոլոր հայտերը կքննենք և կլուծենք օրենքով սահմանված 90-օրյա ժամկետում:

28. Վերակազմակերպում ենք հարկային վարչարարության համակարգը.

- Ներդնում ենք գործառույթների վրա հիմնված կազմակերպական կառուցվածք և միավորում չորս մասնագիտացված տեսչությունները նախքան 2009 թ. հունվարի 1-ը: Ավելին, մտադիր ենք նախքան 2008թ. վերջը մարզերում փակել մի շարք տեսչություններ, որոնք ծախսերի առումով արդյունավետ չեն, իսկ նախքան 2009 թ. հունիս շարունակել մարզային տեսչությունների հետագա միավորումները (կառուցվածքային հենանիշ):

- Մաքսային պետական կոմիտեն միացնում ենք Հարկային պետական ծառայությանը՝ տնտեսումներից որոշակի օգուտներ ապահովելու նպատակով: Վերոհիշյալ օգուտները հիմնականում վերաբերելու են վարչական օժանդակ գործառույթներին և տեղեկատվական համակարգերին, մինչդեռ մաքսային և հարկային վարչարարության հիմնարար գործառույթները չեն միաձուլվի՝ հաշվի առնելով դրանց բնույթների տարբերությունները: Միացումը, որի արդյունքում ստեղծվել է նոր կազմակերպություն՝ Պետական եկամուտների կոմիտեն, նախատեսվում է ավարտել մինչև 2009 թ. հունվար:

29. Մտադիր ենք 2010 թ. հունվարի 1-ից ներդնել կենսաթոշակային համակարգի պարտադիր կուտակային բաղադրիչը: Ավարտել ենք համապատասխան ուսումնասիրության (“White paper”) մշակումը, որում գնահատվել են այս բարեփոխումների հետ կապված ծախսերը, և սկսել ենք

իրագործման գործողությունների ծրագիր մշակել: Միասնական հարկատեսակի ներդրման մասին օրենսդրության մշակումն արդեն սկսված է, և ակնկալվում է այն խորհրդարան ներկայացնել մինչև 2009 թ. տարվա կեսը: Պետական եկամուտների կոմիտեն, որը ստանձնելու է մասհանումների գանձման գործառույթը, արդեն սկսել է նախապատրաստական աշխատանքը: Միջնաժամկետ ծախսային ծրագրի շրջանակներում մտադիր ենք պատրաստել միջնաժամկետ հարկաբյուջետային ռիսկերին, այդ թվում՝ պարտադիր կուտակային բաղադրիչի ներդրմանն առնչվող ռիսկերին նվիրված վերլուծական զեկույց, որը կներառի նաև մոտակա մի քանի տարիներին բազային կենսաթոշակների ավելացման ծախսային գնահատական (կառուցվածքային հենանիշ):

Ֆինանսական հատված

30. Կշարունակենք բանկային հատվածի բարեփոխումները.

- Ի լրումն սպառողների պաշտպանության մասին վերջերս ընդունված օրենսդրության, նախապատրաստում ենք ֆինանսական պայմանների, պրոդուկտների և ծառայությունների մասին սպառողների իրազեկման լայնածավալ քարոզարշավ:

- Վարկերի հասանելիությունը բարձրացնելու և ֆինանսական միջնորդությունը խթանելու նպատակով մտադիր ենք ներդնել վարկարժանության գնահատման միասնական համակարգ, բարելավել վարկային վերլուծությունները և շարունակել սպառողների իրավունքների պաշտպանության բարելավումը՝ ինչպես նախատեսված է “Վարկային տեղեկությունների շրջանառության մասին և վարկային բյուրոների գործունեության մասին” վերջերս ընդունված օրենքով:

- Առևտրային բանկերում ռիսկերի կառավարման կարողությունների զարգացումը խթանելու նպատակով ՀՀ ԿԲ-ն մշակելու է բանկերում ռիսկերի գնահատման ուղենիշներ և նոր համակարգ՝ որպես հիմք ընդունելով միջազգային լավագույն պրակտիկան: Ավելին, ՀՀ ԿԲ-ն դիտարկում է բանկերում ռիսկերի կառավարման համակարգերի դիտարկումը իր կողմից իրականացվող վերահսկողության սովորական աշխատանքների շրջանակում:

31. Շարունակել արժեթղթերի շուկայի զարգացմանն ուղղված աշխատանքները.

- Մտադիր ենք իրականացնել արժեթղթերի շուկայի զարգացման համապարփակ ծրագիր՝ ինչպես նախատեսված է մեր կապիտալի շուկայի զարգացման գործողությունների ծրագրով: Մշակել ենք պետական պարտքի կառավարման նոր ռազմավարություն, որով նախատեսվում է միջնաժամկետ հատվածում ներքին պարտքի թողարկումների ավելացում, որի արդյունքում ներքին պարտքի շրջանառության մեջ գտնվող ծավալը 2020 թ. կհասնի ՀՆԱ-ի 7 տոկոսի: Այդ նպատակով կթողարկվեն հենանիշային պարտատոմսեր՝ 4 տարբեր ժամկետայնություններով: Բաց շուկայի գործառնությունների համար առկա կառավարական արժեթղթերի պաշարը մեծացնելու նպատակով համապատասխան փոփոխություններ կկատարենք "Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին" օրենքի 11-րդ հոդվածում՝ նախքան 2009 թ. տարվա կեսը (կառուցվածքային հենանիշ, ժամկետը՝ 2009 թ. հունիս), որը հնարավորություն կտա ՀՀ ԿԲ վերակապիտալացումը աստիճանաբար իրականացնել շուկայական արժեթղթերով:

- Ավարտելով ձեռնարկությունների վարկանիշային գնահատման համակարգի ստեղծումը, ՀՀ ԿԲ-ն կշարունակի վարկանիշներ տալ այն ընկերություններին, որոնք կարող են "Nasdaq-OMX"-ում առաջնային թողարկումների համար հնարավոր թեկնածուներ լինել: ՀՀ ԿԲ-ում մշակված՝ վարկանիշային գնահատման համակարգը վերջին հաշվով կփոխանցվի մասնավոր հատվածին:

32. Ինչ վերաբերում է ապահովագրության ոլորտի բարեփոխումներին.

- Մտադիր ենք ավարտի հասցնել ապահովագրական ընկերությունների ակտիվների դասակարգումը:

- Նորաստեղծ ապահովագրական ընկերությունների համար 2009 թ. հունվարին ներդնելու ենք կապիտալի նոր նվազագույն պահանջ՝ 500 միլիոն դրամի չափով: Մտադիր ենք ժամանակի ընթացքում բարձրացնել այդ պահանջը՝ հասցնելով 1 միլիարդ դրամի կյանքի ապահովագրություն չիրականացնող, և 1.5 միլիարդ դրամի՝ կյանքի ապահովագրություն իրականացնող ընկերությունների համար:

- Մինչև 2010 թ. հունվար ընդունելու ենք օրենսդրություն երրորդ անձի նկատմամբ ավտոճանապարհային պատասխանատվության պարտադիր ապահովագրության ներդրման մասին: Դա էապես կնպաստի Հայաստանում ապահովագրական շուկայի զարգացմանը: Ակնկալվում է, որ այդ կերպ նաև հնարավոր կլինի ապահովել նոր հեղինակավոր ընկերությունների ներգրավումը հայաստանյան շուկայում:

Այլ կառուցվածքային բարեփոխումներ

33. Մտադիր ենք շարունակել մեր աշխատանքները կառավարման բարելավման և կոռուպցիայի նվազեցման ուղղությամբ: Մտադիր ենք մինչև 2008 թ. նոյեմբեր ավարտի հասցնել հակակոռուպցիոն նոր ռազմավարության միջոցառումների ծրագրի մշակումը, որի իրագործումն անպայմանորեն մտադիր ենք շարունակել ծրագրի ժամանակահատվածի ընթացքում: Մտադիր ենք իրականացնել հանրային հատվածի բարեփոխումների երրորդ փուլը, որի արդյունքում ակնկալվում է բարելավել քաղաքացիական ծառայության կատարողականը և էթիկայի չափանիշները:

34. Մենք հաստատել ենք 5-ամյա ռազմավարություն, միտված Հայաստանի՝ որպես ձեռնարկատիրության և ներդրումների օրինակելի կենտրոնի զարգացմանը: 2008 թ. կառավարության ծրագիրը և ՓՄՁ-ների գծով խոչընդոտների վերացման մասին վարչապետի որոշումը առաջին կարևոր քայլերն են այդ ուղղությամբ: Բարեփոխումները կարագանան 2009 թ., նպատակ ունենալով զգալիորեն բարելավել Doing Business-ի ցուցանիշները:

IV. ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ

35. Ծրագրի իրականացման առաջընթացը մոնիտորինգի կենթարկվի կից ներկայացված Աղյուսակ 1-ում նշված քանակական կատարողական չափորոշիչների և կողմնորոշիչ թիրախների, ինչպես նաև Աղյուսակ 2-ում ներկայացված կառուցվածքային կատարողական չափորոշիչների և հենանիշերի միջոցով: Սույն Հուշագրին կից ներկայացված Փոխըմբռնման տեխնիկական հուշագիրը սահմանում է Աղյուսակ 1-ի քանակական թիրախները և հաշվետվություններ ներկայացնելու պահանջները: Կիսամյակային կատարողական չափորոշիչները մոնիտորինգի կենթարկվեն երկու ստուգումների միջոցով: Քանակական թիրախները ներառում են բյուջեի հիմնական հաշվեկշռի (առանց դրամաշնորհների և արտաքին տոկոսային

վճարումների, սակայն՝ ներառյալ ցանկացած նոր սուբսիդիաներ) թիրախներ և արտաքին պարտքի պայմանագրերի կնքման կամ երաշխավորման սահմաններ (տես Աղյուսակ 1): Գնաճի նպատակադրման լիարժեք ռազմավարության անցման շրջանում, որպես կողմնորոշիչ թիրախներ, կշարունակվեն օգտագործվել դրամավարկային ագրեգատները: Երբ անցումն ավարտվի, գնաճի թիրախի կատարումը գնահատելու համար կօգտագործվեն սահմանված որոշակի դրամավարկային ցուցանիշներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Սույն հուշագիրը սահմանում է այն հենանիշները, կատարողական չափանիշները, կողմնորոշիչ թիրախները, ճշգրտիչները և հաշվետու նորմատիվները, որոնք նշվում են Տնտեսական և ֆինանսական քաղաքականությունների հուշագրում (ՏՖՔՀ):

I. ՔԱՆԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

1. Ծրագրում սահմանվում է ՀՀ ԿԲ-ի **զուտ միջազգային պահուստների (ԶՄՊ)** նվազագույն մակարդակը: Այդ պահուստների գումարը հաշվարկվում է որպես ընդհանուր համախառն արտաքին պահուստների (առանց արտարժույթով արտահայտված դրամական բազայի) և համախառն պաշտոնական պահուստային պարտավորությունների տարբերություն: Ընդհանուր համախառն արտաքին պահուստները սահմանվում են, որպես ՀՀ ԿԲ-ի դրամական ոսկու պաշարները (առանց գրավադրված կամ սվոփի ենթակա գումարների), փոխառման հատուկ իրավունքի (SDR) պաշարները, որևե պահուստային դիրք ԱՄՀ-ում և փոխարկելի արտարժույթի պաշարները՝ կանխիկով կամ ոչ ռեզիդենտ ֆինանսական հաստատություններում (դեպոզիտներ, արժեթղթեր, կամ այլ ֆինանսական գործիքներ): Համախառն պահուստները, որոնք պահվում են արժեթղթերի տեսքով, ինչպես նաև ֆինանսական այլ գործիքները գնահատվում են շուկայական արժեքով: Համախառն պահուստները ներկայացվում են Կառավարության Մասնավորեցման հատուկ հաշվի (ՄՀՀ) և Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամի (ՀՄՀ) մնացորդից առանձին և չեն ներառում կապիտալի բաժնեմասերը արտասահմանյան ֆինանսական հաստատություններում և ոչ իրացվելի արտաքին ակտիվները: Պաշտոնական պահուստային պարտավորությունները ԱՄՀ-ի նկատմամբ չմարված պարտավորություններն են և փոխարկելի արտարժույթով ՀՀ ԿԲ-ի պարտավորությունները ոչ ռեզիդենտներին, մինչև մեկ տարի սկզբնական ժամկետայնությամբ: ԶԱՊ-ների նկատմամբ մոնիտորինգը կատարվում է ԱՄՆ դոլարով և, ելնելով ծրագրի վերահսկման նպատակից, ԱՄՆ դոլարից զատ այլ արտարժույթով ակտիվները և պարտավորությունները դոլարային համարժեք գումարների են փոխարկվում՝ օգտագործելով 1-ին աղյուսակում սահմանված փոխարժեքը:

2. Ծրագրով նախատեսվում է ՀՀ ԿԲ-ի **զուտ ներքին ակտիվների (ԶՆԱ)** առավելագույն մակարդակ: Ծրագրի թիրախներով ՀՀ ԿԲ-ի ԶՆԱ-ն սահմանվում է որպես դրամական բազա հանած ԿԲ-ի ԶՄՊ, հանած արտարժույթով արտահայտված դրամական բազա, և գումարած ՀՀ ԿԲ-ի միջնաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունները (այսինքն, մեկ տարի կամ ավելի երկար ժամկետով պարտավորությունները): Ծրագրի նպատակները գնահատելու համար ԶՄՊ-ի, միջնաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների և դոլարով դրամական բազայի դրամային համարժեքը հաշվարկվում է ծրագրի փոխարժեքով՝ մեկ դոլարի դիմաց 304.22 դրամ: Եվրոյով դրամական բազայի դրամային համարժեքը հաշվարկվում է 1-ին աղյուսակում նշված ծրագրային փոխարժեքով: ԶՆԱ-ն ընդգրկում է. ընդհանուր կառավարության զուտ վարկավորումը ՀՀ ԿԲ-ի

կողմից, ՀՀ ԿԲ-ի առևտրային բանկերին տրամադրած վարկի չմարված մասը (ներառյալ օվերդրաֆտը), հանած դրամական բազայում չընդգրկված պարտավորությունները (բացառությամբ հաշվարկված տոկոսավճարների) և այլ հոդվածները (զուտ):

3. **Ծրագրում դրամական բազայի** առավելագույն սահմանաչափը կողմնորոշիչ ցուցանիշ է: Դրամական բազան սահմանվում է որպես շրջանառության մեջ գտնվող կանխիկի և պարտադիր և ավելցուկային պահուստների և որոշ ռեզիդենտ գործակալների ընթացիկ և ժամկետային դեպոզիտային հաշիվները հանրագումար:[3]

4. **ՀՀ ԿԲ-ի կողմից կառավարության վարկավորման պաշարը** ներառում է ՀՀ ԿԲ-ի պետական կարճաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի պաշարները, հանած կառավարության դեպոզիտները ՀՀ ԿԲ-ում (ներառյալ Գանձապետական միասնական հաշվում ավանդները, դոնորների կողմից ֆինանսավորվող ԾԻԳ-երի դեպոզիտները, Լինսի հիմնադրամի ծրագրերը և մարդասիրական օգնության վաճառքից ստացված հասույթը): Երկարաժամկետ պարտատոմսերը գնահատվում են գնման գնով, որից հանվում են հաշվարկված տոկոսագումարները, իսկ կարճաժամկետ պարտատոմսերը՝ գնման գնով գումարած հաշվարկված տոկոսը:

5. **Առևտրային բանկերի զուտ վարկերը կենտրոնական կառավարությանը** ընդգրկում են (1) առևտրային բանկերի համախառն վարկերը կենտրոնական կառավարությանը հանած կառավարության ավանդներն առևտրային բանկերում (ընդգրկելով կենտրոնական կառավարության համաֆինանսավորումը՝ Լինսի հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող վարկային գծի միջոցով իրականացվող ծրագրերի շրջանակում) և (2) բանկերի ունեցած երկարաժամկետ պարտատոմսերը (գնահատված՝ գնման գնով և հանած հաշվարկված տոկոսը) և կարճաժամկետ պարտատոմսերը (գնահատված գնման գնով գումարած հաշվարկված տոկոսը): **Բանկային համակարգի կողմից կառավարության զուտ վարկավորումը** ՀՀ ԿԲ-ի կողմից կենտրոնական կառավարության զուտ վարկավորման և առևտրային բանկերի կողմից կենտրոնական կառավարության զուտ վարկավորման հանրագումարն է:

6. **Արտաքին պարտքի առավելագույն սահմանաչափը** վերաբերում է բոլոր տեսակի նոր միջնաժամկետ և երկարաժամկետ ոչ արտոնյալ արտաքին պարտքերին[4], մեկ տարին գերազանցող նախնական մարման ժամկետով, որի

---

[3] Իրացվելիություն ներքաշող այնպիսի գործարքներ, ինչպիսիք են ռեպո պայմանագրերի ներքո գործարքները, ՀՀ ԿԲ-ի դեպոզիտային գործիքը, արտարժութային սվոփները և ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթերը ներառված չեն բանկերի նկատմամբ պահանջների մեջ, այսինքն՝ չեն ընդգրկվում դրամական բազայի սահմանման մեջ:

[4] «Պարտք» բառը պետք է ունենա 2000 թ. օգոստոսի 24-ին Գործադիր խորհրդի N 12274-(00/85) որոշումով փոփոխված Կատարողական չափանիշների ուղեցույցի 9 ա բաժնում տրված իմաստը:

համար կառավարությունը կամ ՀՀ ԿԲ-ն, կամ կառավարության անունից գործող որևէ գերատեսչություն պայմանագիր է կնքել կամ երաշխիք տրամադրել: Այն ներառում է մեկ տարի կամ պակաս ժամկետայնությամբ պարտքը: Սահմանափակումները չեն ընդգրկում պարտքի փոփոխությունները, որոնք առաջանում են վերաֆինանսավորման գործարքներից կամ հետաձգված վճարման պայմանավորվածություններից, ոչ ռեզիդենտներին պետական կարճաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի և վաճառքից, (եթե վաճառքը կայացել է կանոնավոր աճուրդում և չի պարունակել արժույթի փոխարժեքի հետ կապված որևէ երաշխիք) արտոնյալ վարկերից և ԱՄՀ-ի կողմից տրամադրած վարկերից[5]: Բացառությամբ ներմուծմանը վերաբերող կանոնավոր վարկերի, կառավարության կամ ՀՀ ԿԲ-ի կամ կառավարության անունից գործող ցանկացած այլ գործակալության ստանձնած կամ երաշխավորած կարճաժամկետ արտաքին պարտքերի (մինչև մեկ տարի սկզբնական մարման ժամկետով պարտավորությունների) նկատմամբ գործում է զրոյական սահմանափակում : Այն գործարքները, որոնք ենթակա են սահմանափակման պետք է հաշվարկվեն պայմանագրում նշված արժույթով և փոխարկվեն ԱՄՆ դոլարի՝ պայմանագրի կնքման պահին գործող միջին ամսական շուկայական փոխարժեքով:

7. **Արտաքին ապառքները** բաղկացած կլինեն ընդհանուր ժամկետանց պարտքի սպասարկման պարտավորություններից (այսինքն՝ մայր գումարի և տոկոսավճարի գծով վճարումների), որոնք առաջանում են պետական հատվածի կողմից կնքված կամ երաշխավորված վարկերի, այդ թվում՝ ապառքների դիմաց չվճարված տուգանքների և տուգանքների գծով կուտակված տոկոսավճարների մասով:[6]

8. **Կենտրոնական կառավարության հիմնական հաշվեկշիռը ըստ դրամարկղային սկզբունքի** սահմանվում է որպես կառավարությանը տրամադրված ներքին բանկային համակարգի զուտ ֆինանսավորման, ներքին ոչ բանկային զուտ ֆինանսավորման, արտաքին զուտ ֆինանսավորման հանրագումարը՝ բացասական նշանով, գումարած արտաքին տոկոսային վճարները, հանած կենտրոնական կառավարության տրամադրված դրամաշնորհները: Արտաբյուջետային նոր ընդհանուր սուբսիդիա սահմանելու դեպքում, հիմնական հաշվեկշիռը կգնահատվի՝ ներառելով սուբսիդիան որպես կառավարության

---

[5] Ծրագրի նպատակների համար վարկը արտոնյալ է համարվում եթե դրամաշնորհային տարրը կազմում է առնվազն 35 տոկոս, հաշվարկված CIRR (առևտրային տոկոսադրույքների կողմնորոշիչ մեծություններ) զեղչ գործոնով, գումարած մարժա կախված վարկի ժամկետից: Մարժաները հետևյալն են. 0.75%, 15 տարի ժամկետայնությամբ, 1% 15-19 տարի ժամկետայնությամբ, 1.15% 20-29 տարի ժամկետայնությամբ և 1.25% 30 կամ ավել տարի ժամկետայնությամբ: CIRR-ի միջինը վերջին տաս տարիների համար կիրառվում է առնվազն 15 տարի ժամկետայնությամբ վարկերի համար, իսկ ավելի կարճ ժամկետայնությամբ վարկերի համար կիրառվում է նախորդ վեց ամիսների CIRR-ի միջինը:

6 Պետական հատվածը սահմանվում է ըստ Կառավարության ֆինանսական վիճակագրության ձեռնարկի (GFS 2001) և Ազգային հաշիվների համակարգի (1993 SNA): Այն ներառում է ընդհանուր կառավարությունը և ոչ-ֆինանսական պետական ձեռնարկությունները:

ծախսերի մի մաս: **Զուտ բանկային համակարգի ֆինանսավորումը կառավարությանը** հավասար է ժամանակահատվածի ընթացքում պետական բյուջեին տրամադրված զուտ վարկավորման փոփոխությանը: **Ոչ բանկային զուտ ֆինանսավորումը** հավասար է հետևյալի հանրագումարին. (1) ժամանակահատվածի ընթացքում ոչ բանկերի կողմից գնված պետական կարճաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի (ներառյալ կարճաժամկետ պարտատոմսերի դիմաց հաշվարկված տոկոսավճարը, և չներառելով երկարաժամկետ պարտատոմսերի համար հաշվարկված տոկոսավճարը)[7] փոփոխության, (2) ցանկացած այլ վճարում կամ գործարք, որն ավելացնում է ոչ բանկերի պահանջները կենտրոնական Կառավարության նկատմամբ, գումարած ՄՀՀ-ից կամ գանձապետարանի ենթահաշվից վերցրած գումարները, որոնք պարունակում են մասնավորեցումից ստացվող դրամային գումարներ, հանած կենտրոնական Կառավարության կողմից մասնավոր ռեզիդենտ ոչ բանկային գործակալներին կատարած վճարումները՝ հանած ներքին զուտ վարկավորումն ըստ GFSM 2001 դասակագրման: **Զուտ արտաքին ֆինանսավորումը** հաշվարկվում է որպես ընդհանուր պարտքը ավելացնող վճարումներ ոչ ռեզիդենտներից կենտրոնական Կառավարությանը, հանած կենտրոնական Կառավարության ընդհանուր պարտքի մարումը ոչ ռեզիդենտներին հանած ներքին զուտ վարկավորումն ըստ GFSM 2001 դասակագրման: **Դրամաշնորհները** հաշվարկվում են որպես ընդհանուր պարտքը չավելացնող վճարումներ՝ ոչ ռեզիդենտներից կենտրոնական Կառավարությանը: **Արտաքին տոկոսագումարի վճարումները** հաշվարկվում են որպես ոչ ռեզիդենտներին կառավարությունից տոկոսագումարի վճարումներ : Բոլոր արտարժույթով կատարված գործարքները հաշվառվում են դրամով, կիրառելով գործարքի պահին գերակայող դրամի փոխարժեքը:

9. Ծրագրի իրականացման գրասենյակները, որոնք ի կատար են ածում ԱՄՆ-ում գրանցված Լինսի հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագրեր, հաշիվներ ունեն ՀՀ ԿԲ-ում: Ֆիսկալ հաշիվներում այդ դրամաշնորհները հաշվառվում են եկամտային մասում՝ որպես արտաքին դրամաշնորհներ, իսկ ծախսային մասում՝ որպես արտաքին ֆինանսավորմամբ կապիտալ ծախսեր: Բացի այդ, Ամերիկյան Լինսի հիմնադրամը վարկեր է հատկացնում ներդրումների ֆինանսավորման համար: Վարկերի այն մասը, որը միջնորդվում է բանկային համակարգի կողմից, ֆինանսական հաշիվներում գրանցվում է որպես գծից ներքև ֆինանսավորման հոդված և հանվում է զուտ վարկավորումից:

10. Ձեռնարկությունների վաճառքից ստացված արտարժութային եկամուտները կուտակվում են Մասնավորեցման հատուկ հաշվում (ՄՀՀ): Այդ հաշիվը պահվում է ՀՀ ԿԲ-ում և ստացված եկամուտները ներդրվում են արտասահմանում՝ ՀՀ ԿԲ-ի միջազգային պահուստներ հետ միասին: Այդ եկամուտները ընդգրկվում ենԿԲ-ի դրամական հաշիվներում, որպես զուտ արտաքին ակտիվների մի մաս, իսկ

[7] Ներքին ոչ բանկերի պետական մուրհակների և պարտատոմսերի պաշարները սահմանվում են իբրև ընդհանուր չվճարված մուրհակները և պարտատոմսերը հանած բանկային համակարգի և ՍԱՊՀ-ի պաշարները:

11. Ծրագիրը սահմանում է **Կենտրոնական կառավարության ներքին ապառքների** պաշարի առավելագույն սահմանաչափը: Ներքին ապառքները սահմանվում են հետևյալ կերպ. աշխատավարձերի, սոցիալական ապահովագրության վճարների (ներառյալ կենսաթոշակային), ընտանեկան նպաստներ, պարտքի ներքին մայր գումարի և տոկոսադրույքի վճարման դիմաց ապառքները՝ ամսվա վերջի դրությամբ բոլոր չվճարված պահանջներն են: Սա չի ներառում մինչև 0.5 միլիարդ դրամ տեխնիկական ապառքները, որոնք կարող են առաջանալ, որպես այս ծախսերի կատարման աննշան ուշացումների արդյունք: Բոլոր այլ ծախսային հոդվածների համար, ապառքները սահմանվում են որպես 30 օրվանից ավել ժամկետով չվճարված պահանջների հանրագումար, հաստատված ապրանքներ և ծառայություններ ստացողի կողմից: Սակայն տարվա վերջի դրությամբ բոլոր ժամկետանց գումարները պետք է մարվեն համաձայն բյուջեի մասին օրենքի:

II. ՃՇԳՐՏԻՉՆԵՐ

12. Ծրագրի շրջանակներում քանակական կատարողական չափանիշները և հենանիշները ենթակա են հետևյալ ճշգրտումների.

- **Համաշխարհային բանկի աջակցությունը բյուջեին.** հետևյալ հենանիշները կճշգրտվեն Համաշխարհային բանկի կողմից բյուջեին տրամադրվող ուղղակի օժանդակության՝ ընդհանուր ծրագրավորվածից ցածր հատկացումների ողջ գումարի չափով. ԶՄՊ (վարընթաց), ՀՀ ԿԲ-ի ԶՆԱ (վերընթաց) և կառավարության զուտ վարկավորում (վերընթաց): Ծրագրավորված գումարները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 2-ում:

- **KfW-ի վարկերի ստացում**. ՀՀ ԿԲ-ի զուտ ներքին ակտիվների հենանիշը կճշգրտվի վերընթաց KfW-ից չծրագրավորված ցանկացած ստացման գումարի ողջ չափով: Ճշգրտումը կկատարվի ծրագրային փոխարժեքով: Ծրագրավորված գումարը ցույց է տրված ստորև՝ 3-րդ աղյուսակում:

- **ՀՀ ԿԲ-ի վերակապիտալացում.** Բանկային համակարգի կողմից կառավարության զուտ վերակապիտալացման հենանիշը կճշգրտվի վերընթաց՝ ՀՀ ԿԲ-ի վերակապիտալացման գումարի ողջ չափով:

III. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ՀԵՆԱՆԻՇՆԵՐԸ

13. Բարելավել ներքին շուկան՝ ստորագրելով համաձայնագիր ֆինանսների նախարարության (ՖՆ) և կենտրոնական բանկի (ԿԲ) միջև կառավարության աճուրդների համակարգման վերաբերյալ, ներառյալ հետևյալը. (i) ԿԲ-ի արժեթղթերի թողարկման դադարեցում, (ii) հանձնարարություն՝ խուսափելու իր աճուրդների ընթացքում եկամտաբերության հատման միջոցառումների իրականացումից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարվի հայտերի բնականոն սպեկտրից դուրս գտնվող՝ ակնհայտորեն սպեկուլյատիվ հայտերը մերժելու նպատակով: (կառուցվածքային հենանիշ, դեկտեմբեր 2008 թ.): Համաձայնագրում կսահմանվեն բնականոն սպեկտրից դուրս գտնվող հայտերի որոշման չափանիշները (միջին եկամտաբերությունից շեղման հիման վրա՝ բազմակի ստանդարտ շեղումների կամ բացարձակ բազիսային միավորների տեսքով): Տես ՖՏՔՀ-ի 24-րդ կետը:

14. Վերակառուցել հարկային վարչարարության կազմակերպման համակարգը. (i) գործառույթների վրա հիմնված՝ ժամանակակից կազմակերպչական կառուցվածքի ներդրում, (ii) չորս մասնագիտացված տեսչությունների միավորում՝ խոշոր հարկ վճարողների միասնական տեսչության կազմում և (iii) ծախսեր-օգուտներ հարաբերակցության առումով 2008 թ վերջի դրությամբ իրենց չարդարացնող հարկային տեսչություններից առնվազն 10-ի փակում: (կառուցվածքային հենանիշ, դեկտեմբեր 2008 թ.): Հարկային տեսչությունների թվաքանակի հետագա կրճատում՝ առնվազն 20-ով մինչև հունիս 2009 թ. (կառուցվածքային հենանիշ, հունիս 2009 թ.): Տես ՖՏՔՀ-ի 28-րդ կետը:

15. Կենտրոնական բանկի վերակապիտալացման մեխանիզմի բարելավում՝ իրականացնելով համապատասխան փոփոխություններ “Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին” օրենքի 11-րդ հոդվածում՝ նախքան 2009 թ. տարվա կեսը (կառուցվածքային հենանիշ, ժամկետը՝ 2009 թ. հունիս), որը հնարավորություն կտա ՀՀ ԿԲ վերակապիտալացումը աստիճանաբար իրականացնել շուկայական արժեթղթերով: Տես ՖՏՔՀ-ի 31-րդ կետը:

16. Ներդնել արտահանողների ԱԱՀ-ի վերադարձի հայտերի քննման և լուծման լավագույն պրակտիկա՝ հետևյալ կերպ. (i) մաքրել վերադարձի հայտերի կուտակված պաշարը, իսկ 2009 թ. ընթացքում ներկայացված բոլոր հայտերի համար՝ պահպանել դրանք 90 օրում քննարկելու և լուծելու վերջնաժամկետը, (ii) ներդնել ռիսկերի կառավարման մոտեցումներ,[8] (iii) ներդնել կանխատեսման

[8] Հարկային մարմնի կողմից ԱԱՀ վերադարձի վարչարարության իրականացման համար ռիսկի կառավարման մոտեցում որդեգրելու մասին կվկայեն. (i)

(continued)

համակարգ՝ գնահատելու վերադարձի գումարների ապագայում անհրաժեշտ մակարդակը, որպեսզի ապահովվի ներկայացվելիք իրավաչափ հայտերի բավարարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությունը և (iv) Խորհրդարանին ներկայացնել օրենսդրություն վերադարձի կեղծ հայտերի համար սահմանված պատիժները խստացնելու և վերադարձի՝ սահմանված ժամկետում չբավարարված իրավաչափ հայտերի դիմաց տոկոսներ վճարելու նպատակով (տոկոսները կկիրառվեն միայն 2009 թ. դեկտեմբերի երեսունմեկից հետո ներկայացված նոր հայտերի նկատմամբ) (կատարողական չափանիշ, դեկտեմբեր 2009 թ.): Տես ՖՏՔՀ-ի 27-րդ կետը:

18. Կատարելագործել հարկաբյուջետային ծրագրավորումը՝ պատրաստելով ամենամյա վերլուծական զեկույց, որում նշված կլինեն կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածների հարկաբյուջետային մարտահրավերները և ռիսկերը, ինչպես նաև՝ հարկաբյուջետային քաղաքականության հնարավոր արձագանքն այդ մարտահրավերներին և ռիսկերին: (կառուցվածքային հենանիշ, դեկտեմբեր 2009 թ.): Տես ՖՏՔՀ-ի 29-րդ կետը:

փաստաթղթերով հիմնավորված՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների ռազմավարությունը, ծրագիրը և մեթոդաբանությունը, (ii) ԱԱՀ վերադարձի պահանջ ներկայացնող բոլոր արտահանողների ռիսկայնության կանոնավոր գնահատումների իրականացումը և ռիսկի բնութագրերի (պրոֆիլների) վարումը՝ օգտվելով հարկային և մաքսային տվյալների շտեմարանի և երրորդ անձանցից ստացված տեղեկություններից, (iii) ցածր-ռիսկային գնահատված արտահանողներին (այսինքն՝ արտահանողները, որոնք ԱԱՀ և մյուս հարկերի գծով սահմանված պահանջները նախկինում բարեխղճորեն կատարել են) 14 օրվա ընթացքում վերադարձի վճարում, որին կօժանդակեն վերադարձին հաջորդող ընտրողական ստուգումները և (iv) նախքան վերադարձը՝ օրենքով սահմանված պահանջների քննության 90-օրյա ժամկետում բարձր ռիսկային խմբում ընդգրկված արտահանողների մոտ (այսինքն՝ սահմանված հարկային պահանջները բարեխղճորեն կատարելու հարցում թերացած արտահանողները) ստուգումների իրականացումը:

IV. Տվյալների զեկուցում

18. Կառավարությունը ԱՄՀ-ին կներկայացնի հետևյալ աղյուսակով սահմանված տվյալները՝

Զեկուցող մարմին	Տվյալների տեսակները	Տվյալների նկարագրությունը	Հաճախականությունը	Ժամկետը
ՀՀ ԿԲ[5]	ՀՀ ԿԲ հաշվեկշիռ	Ամփոփում	Շաբաթական	Յուր. ուրբաթ օր
	ՀՀ ԿԲ հաշվեկշիռ	Ամփոփ տեսքով ծրագրային փոխարժեքով և հաշվային պլանի իրական պաշտոնական փոխարժեքով	Ամսական	Յուր. ամսվա վերջից յոթ օրվա ընթացքում
	Դրամավարկային հաշիվներ	ՀՀ ԿԲ բանկային համակարգի հաշվեկշիռը և առևտրային բանկերի կոնսոլիդացված հաշվեկշիռը ծրագրային փոխարժեքով և հաշվային պլանի իրական պաշտոնական փոխարժեքով	Ամսական	Յուր. ամսվա վերջից 25 օրվա ընթացքում
	Միջազգային պահուստներ	Ըստ հաշվային պլանի (i) ծրագրային փոխարժեքով և (ii) իրական պաշտոնական փոխարժեքով	Շաբաթական	Յուր. ուրբաթ օր
		Ըստ հաշվային պլանի (i) ծրագրային փոխարժեքով և (ii) իրական պաշտոնական փոխարժեքով	Ամսական	Յուր. ամսվա վերջից 21 օրվա ընթացքում
	Արտարժութային շուկա	Պաշտոնական փոխարժեք (առք և վաճառք), և ՀՀ ԿԲ-ի միջամտությունների ծավալ, ներառյել արտարժութային սվոփեր, առևտրի օրական ծավալ, առևտրային գործարքների թիվ, և Արմէքսի միջին կշռված փոխարժեք	Շաբաթական	Յուր. ուրբաթ օր
	Տոկոսադրույքներ	Ռեպո տոկոսադրույք, միջբանկային տոկոսադրույք, ըստ ծավալի և ժամկետայնության, պետական պարտատոմսերի տոկոսադրույք, մուրհակների շահութահաբերություն և ժամկետայնություն, ավանդների և վարկավորման տոկոսադրույք, պետական երկարաժամկետ պարտատոմսերի միջին ամսեկան կշռված տոկոսադրույք:,	Ամսական	Յուր. ամսվա վերջից յոթ օրվա ընթացքում
	Միջբանկային դրամական շուկա	Միջբանկային ռեպոների օրական ծավալ և տոկոսադրույք	Շաբաթական	Յուր. ուրբաթ օր

6 Ինչպես սահմանվում է ՀՀ ԿԲ-ի N201 որոշմամբ (1999 թ., դեկտեմբերի 6):

	ՀՀ ԿԲ-ի գործառնություններ	Ռեպո (հակադարձ ռեպո) գործարքներ, լոմբարդային վարկեր, դեպոզիտային միջոցներ	Ամսական	Յուր. ամսվա վերջից յոթ օրվա ընթացքում
	Բանկային իրացվելիություն	Պահուստներ և ավելցուկային պահուստներ	Երկու շաբաթը մեկ	Յուր. երկու շաբաթվա վերջից տաս օրվա ընթացքում
	Բանկային տվյալներ	Վարկերի և ավանդների բաշխվածություն ըստ հատվածների, վարկերի և ավանդների դոլարիզացիա, վարկերի ժամկետայնություն	Ամսական	Յուր. ամսվա վերջից 25 օրվա ընթացքում
	Բանկային ցուցանիշներ	Կապիտալի համարժեքություն, ակտիվների կառուցվածք և որակ, շահութաբերություն, իրացվելիություն, բաց արտարժութային դրիք և համապատասխանություն նորմատիվային պահանջներին	Եռամսյակային	Յուր. եռամսյակի վերջից 30 օրվա ընթացքում
	Սպառողական գների համաթիվ	Բնականոն սղաճի համաթիվ	Ամսական	Յուր. ամսվա վերջից 21 օրվա ընթացքում
	Այլ դրամավարկային տվյալներ	ՄՖՎ (IFS) ֆորմատով	Ամսական	Յուր. ամսվա վերջից 45 օրվա ընթացքում
	Գանձապետական պարտատոմսերի և կտրոնային պարտամուրհակների ֆինանսավորում	Ըստ սեփականատերերի՝ ՀՀ ԿԲ, ռեզիդենտ բանկեր, ռեզիդենտ ոչ բանկեր և ոչ ռեզիդենտներ	Ամսական	Յուր. ամսվա վերջից յոթ օրվա ընթացքում
Ֆինանսների Նախարարություն (ՖՆ)	Գանձապետական պարտատոմսերի և կտրոնային պարտամուրհակների ֆինանսավորում	Աճուրդների տվյալներ, սկզբանական և չլրացած մարման ժամկետներ, թողարկման ծավալ, պահանջարկ, տեղաբաշխում, նվազագույն եկամտաբերություն, եկամտաբերության հատում, միջին եկամտաբերություն	Շաբաթական	Յուր. ուրբաթ օր

	Արտաքին պարտք	Կառավարության, ՀՀ ԿԲ, պետական ձեռնարկությունների չմարված կարճաժամկետ և պայմանագրային կամ երաշխիքային վճարումները և պաշարը, և Կառավարության և պետական ձեռնարկությունների (ձեռնարկություն ըստ ձեռնարկություն) միջնաժամկետ և երկարաժամկետ արտաքին պարտքի չմարված պաշարը, Կառավարության արտաքին պարտքի սպասարկման ապառքների պաշարը և կառավարության երաշխիքների և արտաքին ապառքների չմարված պաշարը	Ամսական	Յուր. ամսվա վերջից 21 օրվա ընթացքում (նախնական տվյալներ) և յուր. ամսվա վերջից 45 օրվա ընթացքում (վերջնական տվյալներ)
	Եկամուտների հավաքագրում	Ընդհանուր հավաքված եկամուտներն առանձին-առանձին ըստ ՀՊԾ և ՄՊԿ, ներառյալ եկամուտների գումարներն ըստ կոնկրետ հարկատեսակների	Ամսական	Յուր. ամսվա վերջից յոթ օրվա ընթացքում
	Ծախսային ապառքներ	Կառավարությունն	Ամսական	կառավարության ապառքների համար յուր. ամսվա վերջից 45 օրվա ընթացքում
	Մասնավորեցման հասույթ	ՄՀՀ հաշվեկշիռը, ՄՀՀ-ից համախառն ներհոսքերը և արտահոսքերը ամսվա ընթացքում՝ կոնկրետ նկարագրելով յուրաքանչյուր գործարքի բնույթը	Ամսական	Յուր. ամսվա վերջից յոթ օրվա ընթացքում
	Գանձապետական միասնական հաշիվ (ԳՄՀ)	Կենտրոնական գանձապետարանի հաշվի մանրամասն բացվածք, այդ թվում՝ կենտրոնական գանձապետարանում դեպոզիտները, թոշակային ֆոնդ, համայնքային բյուջեներ, արտաբյուջետային հաշիվ, դրամայնացման հաշիվ, պետական բյուջեի հաշիվ և հանրապետական բյուջեի համապատասխան հաշիվ – հոսքեր ամսվա ընթացքում և պաշարներ ամսվա վերջի դրությամբ	Ամսական	Յուր. ամսվա վերջից յոթ օրվա ընթացքում
	Համախմբված կենտրոնական կառավարություն	Պետբյուջե	Ամսական	Յուր. ամսվա վերջից 30 օրվա ընթացքում
	Համախմբված ընդհանուր կառավարություն	Կենտրոնական և տեղական կառավարություն և ՊՈԱԿ-ներ, որոնք ընդհանուր կառավարության մաս են կազմում	Եռամսյակային	Յուր. եռամսյակի վերջից 60 օրվա ընթացքում
	Համախմբված ընդհանուր կառավարություն	Կենտրոնական և տեղական կառավարություն և ՊՈԱԿ-ներ, որոնք ընդհանուր կառավարության մաս են կազմում	Տարեկան	Յուր. տարվա վերջից 180 օրվա ընթացքում

	Բյուջեի կատարողական	Կանխիկ բոլոր մուտքերը, կանխիկի ծախսերը, ներառյալ պարտքի սպասարկման վճարումները և արտաքին ու ներքին վարկերի վերցման գործառութները, ծախսերի տվյալները կտրամադրվեն համաձայն տնտեսական և ֆունկցիոնալ դասակարգման՝ հետևելով GFS2001 մեթոդաբանությանը	Ամսական	Յուր. եռամսյակի վերջից մեկ ամսվա ընթացքում
ՖՆ	Վճարումների հաշվեկշիռ	Արտահանման և ներմուծման մանրամասն տվյալներ	Ամսական	Յուր. ամսվա վերջից 28 օրվա ընթացքում
ԱՎԾ	Վճարումների հաշվեկշիռ ՀՆԱ	Արտահանման և ներմուծման մանրամասն տվյալներ	Եռամսյակային	Յուր. ամսվա վերջից 45 օրվա ընթացքում
		Մոտավոր հաշվարկ	Ամսական	Յուր. ամսվա վերջից 30 օրվա ընթացքում
	ՍԳՀ	Ըստ խմբավորման	Ամսական	Յուր. ամսվա վերջից 5 օրվա ընթացքում
	Հարկային ապառքներ	Ըստ հարկատեսակի	Ամսական	Յուր. ամսվա վերջից 30 օրվա ընթացքում
Պետական եկամուտների Կոմիտե (ՊԵԿ)	Հարկային ապառքներ Հարկային գերավճարներ	Էներգետիկայի, ջրի և ոռոգման ոլորտների 30 խոշոր հարկատուների և բոլոր խոշորագույն ընկերությունների համար	Եռամսյակային	Յուր. եռամսյակի վերջից 30 օրվա ընթացքում
		Հարկային եկամուտների բոլոր տեսակների գծով չմարված հարկային գերավճարների մասին մանրամասն տվյալներ ըստ հարկի տեսակի	Ամսական	Յուր. ամսվա վերջից 45 օրվա ընթացքում
	ԱԱՀ վերադարձի հայտերի գծով ապառքներ	ԱԱՀ-ի վերադարձի գծով ապառքների մասին մանրամասն տեղեկատվություն, որն ընդգրկում է ԱԱՀ-ի գծով բոլոր առկա հայտերը, որոնք չեն ընդունվել (և փոխհատուցվել), չեն հաշվանցվել (մասամբ կամ ամբողջությամբ) կամ չեն մերժվել ստանալուց հետո 90 օրվա ընթացքում: Ամսական քննվող վերադարձի հայտերի թվաքանակը:	Ամսական	Յուր. ամսվա վերջից 30 օրվա ընթացքում

	Ներմուծման տվյալներ	1. Արձանագրված ներմուծումների հանրագումարային արժեքը, առանձին ներկայացնելով անմշակ ադամանդների ներմուծումը, 2. Ներմուծման այն գործարքների ընդհանուր արժեքը, որոնց դեպքում դրական մաքսատուրք է առաջացել, 3. Արձանագրված ներմուծման գործարքների ընդհանուր թիվը, 4. Ներմուծման այն գործարքների ընդհանուր թիվը, որոնց դեպքում դրական մաքսատուրք է առաջացել, 5. Արձանագրված ներմուծման այն գործարքների արժեքը, որոնց դեպքում մաքսային արժեքը որոշվել է գործարքի գնով, առանձին ներկայացնելով անմշակ ադամանդների ներմուծումը, 6. Արձանագրված ներմուծման այն գործարքների արժեքը, որոնց դեպքում դրական մաքսատուրք է առաջացել մաքսային արժեքը գործարքի գնի հիման վրա որոշելիս: 7. Արձանագրված ներմուծման այն գործարքների թիվը, որոնց դեպքում մաքսային արժեքը որոշվել է գործարքի գնով, և 8. Արձանագրված ներմուծման այն գործարքների թիվը, որոնց դեպքում դրական մաքսատուրք է առաջացել մաքսային արժեքը գործարքի գնի հիման վրա որոշելիս:	Եռամսյակային	Յուր. եռամսյակի վերջից 30 օրվա ընթացքում

Աղյուսակ 1՝ Հայաստան. ՀՀ ԿԲ փոխարժեք՝ ծրագրային
(2007թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ, ըստ արտարժութային փոխարժեքների, դրամ/արտարժույթ փոխարժեքի հաշվարկի համար օգտագործվել է 1 ԱՄՆ դոլարը = 304.22 դրամ փոխարժեքը)

Երկիր	Դրամ մեկ միավոր արժույթի համար	ԱՄՆ դոլար մեկ միավոր արժույթի համար
Ավստրալական դոլար	266.62	0.8764
Կանադական դոլար	310.90	1.0220
Շվեյցարական ֆրանկ	268.22	0.8817
Դանիական կրոն	59.94	0.1970
Եվրո	446.96	1.4692
Ֆունտ ստեռլինգ	608.27	1.9994
Ճապոնական յեն	2.71	0.0089
Նորվեգական կրոն	56.22	0.1848
Շվեդական կրոնա	12.40	0.0408
ԱՄՆ դոլար	46.99	0.1545
ՓՀԻ (SDR)	304.22	1.0000
Ոսկի 1/		

1/ Մեկ գրամի գինը

Աղյուսակ 2. Հայաստան. Համաշխարհային Բանկի վարկեր 1/
(միլիարդ դրամ)

2009			
Մարտ	Հունիս	Սեպտեմբեր	Դեկտեմբեր
0	0	0	0

1/ Կուտակային 2008 թ. դեկտեմբերից, ծրագրային փոխարժեքով

Աղյուսակ 3. Հայաստան. KfW-ի վարկերի ստացումը 1/
(միլիարդ դրամ)

2009			
մարտ	հունիս	սեպտեմբեր	դեկտեմբեր
0.03	0.06	0.09	0.13

1/ կուտակային 2008 թ. դեկտեմբերից, ծրագրային փոխարժեքով: